Ծառայություններ Օնթարիոյի նորեկների համար

29-ը դեկտեմբերի, 2015 թ.

Բարի գալուստ Օնթարիո

Բարի գալուստ Օնթարիո՝ Կանադայի ամենաբազմազան նահանգ, որտեղ բոլոր նոր ներգաղթյալների կեսից ավելին իր տունն է հիմնում:

Բազմաթիվ ներգաղթյալներ գալիս են Օնթարիո այստեղ առաջարկվող հնարավորությունների պատճառով: Մեր մարդիկ մեր մեծագույն հարստությունն են, և մենք ողջունում ենք այն տաղանդը և եռանդը, որ դուք բերում եք մեր նահանգ: Ձեր ներդրումը Օնթարիոյի հարուստ մշակութային բազմազանության մեջ հարստացնում է մեր սոցիալական և և տնտեսական կյանքը և թափ հաղորդում մեր նահանգի ստեղծագործական և նորարարական մտքին և գլոբալ ցանցերի հետ ունեցած կապին:

Այս տեղեկաթերթում նկարագրված են բազմաթիվ ծրագրեր և ծառայություններ, որոնք տրամադրում է Քաղաքացիության, ներգաղթի և միջազգային առևտրի նախարարությունը՝ օգնելու ձեզ հաստատվել և նոր կյանք սկսել Կանադայում:

Նորեկների բնակեցման ծրագիր և փախստականների վերաբնակեցման ծառայություններ

Օնթարիոյի «Նորեկների բնակեցման ծրագիրը» ձեզ տրամադրում է ծառայություններ՝ օգնելու ձեզ հաստատվել, տեղեկանալ Օնթարիոյում կյանքի մասին և ստեղծելու սոցիալական կապեր: Բնակեցման ծառայություններն առկա են բազմաթիվ լեզուներով՝ ձեզ տրամադրելու տեղեկություններ, գործիքներ, ռեսուրսներ և համայնքային աջակցություն՝ հաջողությամբ ինտեգրվելու համար: Կարևոր է իմանալ, որ բնակեցման այս ծառայությունները հասանելի են Օնթարիոյի ամբողջ տարածքի բազմաթիվ համայնքներում և տրամադրվում են անվճար:

Ontario

Բնակեցման ծառայությունները ներառում են՝

- Օգնել ձեզ՝ ստանալ ձեզ անհրաժեշտ պետական և համայնքային ծառայությունները
- Պատասխանել հարցերին ձեր նոր համայնքի մասին
- Օգնել ձեզ՝ գտնել ապրելու տեղ
- Օգնել ձեզ՝ լրացնել ձևերը
- Օգնել ձեզ՝ գտնել աշխատատեղ կամ անցնել լրացուցիչ ուսուցում
- Գտնել դպրոց կամ երեխաների խնամքի հաստատություն
- Օգտվել առողջապահական ծառայություններից
- Օգնել ձեզ՝ գտնել անգլերեն/ֆրանսերեն լեզվի դասընթաց
- Աջակցել ձեզ՝ գործ ունենալ անցումային և բնակեցման հարցերի հետ
- Թարգմանել փաստաթղթեր կամ ապահովել բանավոր թարգմանություն

Բնակեցման ծառայությունների մասին իմացեք ավելին՝ այցելելով http://settlement.org

Նորեկների բնակեցման ծրագիրը նաև մասնագիտացված աջակցություն է տրամադրում վերաբնակեցված փախստականներին, այդ թվում՝ մասնավոր անձանց կողմից հովանավորվող և պետական աջակցություն ստացող փախստականներին՝ գործակալությունների ցանցի միջոցով, որոնք վերաբնակեցման հարցերով աջակցություն են տրամադրում Օնթարիոյի վեց համայնքներում՝ Տորոնտո և Մեծ Տորոնտոյի քաղաքային ագլոմերացիա, Օտտավա, Համիլթոն, Վինձոր, Քիչիներ և Լոնդոն:

Այս գործակալությունները կարող են աշխատել ձեզ հետ՝ մշակելու և իրականացնելու անհատականացված պլան՝ ձեր կարիքները բավարարելու և Օնթարիոյում ձեր նոր կյանքի նպատակներին հասնելու համար: Գործակալությունները կարող են նաև տրամադրել կամ հեշտացնել մի շարք այլ ծառայությունների հասանելիությունը, օրինակ, բնակարանային, զբաղվածության և հոգեկան առողջության ծառայությունների, ինչպես նաև երեխաներին, կանանց և երիտասարդներին ուղղված նպատակային ծրագրերի:

Վերաբնակեցման հարցերով աջակցության ծրագրի գործակալություն գտնելու համար խնդրում ենք այցելել http://www.citizenship.gov.on.ca/english/newcomers/refugee_services.shtml

Մեծահասակների համար առանց կրեդիտային համակարգի լեզվի ուսուցում

Կանադա ունի երկու պաշտոնական լեզու՝ անգլերեն և ֆրանսերեն: Կարևոր է, որ դուք ունենաք ձեր համայնքի լեզվով և ձեր աշխատավայրում օգտագործվող լեզվով հաղորդակցվելու հմտություններ:

Դուք կարող եք անվճար անցնել անգլերենի և ֆրանսերենի՝ որպես երկրորդ լեզվի (ESL/FSL) սկսնակ, միջանկյալ և խորացված մակարդակների դասընթացներ: Սրանք ընդհանուր ծրագրեր են՝ խոսելու, լսելու, կարդալու և գրելու հմտությունների զարգացման համար: Դուք կարող եք նաև անցնել տվյալ աշխատատեղին հատուկ լեզվի ուսուցում՝ նախապատրաստվելու Օնթարիոյում աշխատանքի ընդունվելու համար: Դուք պետք է նախ ձեր ներկա լեզվական հմտությունները գնահատել տաք տեղական Լեզուների գնահատման և ուղեգրման համակարգված ծառայության կենտրոնում (CLARS)՝ որոշելու այն դասընթացները, որոնք կբավարարեն ձեր կարիքները:

Ձեր լեզվական հմտությունների գնահատման օրը նշանակելու նպատակով լեզուների ուսուցման և տեղական CLARS կենտրոնների մասին իմացեք ավելին՝ այցելելով http://www.ontarioimmigration.ca/en/learn/index.htm

«Կամրջող» ուսուցման ծրագրեր

«Կամրջող» ուսուցման ծրագրերն օգնում են միջազգային ուսուցում անցած որակավորված անհատներին արագորեն մուտք գործել Օնթարիոյի աշխատաշուկա: Այդ ծրագրերի շրջանակում գնահատվում են ձեր հմտությունները և ձեռնհասությունները (կարողությունները)՝ Օնթարիոյի գործատուների սպասելիքների համեմատ, և տրամադրվում են ուսուցում, ինչպես նաև Կանադայի աշխատավայրերում փորձ ձեռք բերելու հնարավորություն:

«Կամրջող» ուսուցումը տրամադրում է ուսուցման և ըստ կարիքների համապատասխանեցված մի շարք ծառայություններ, օրինակ, ակադեմիական և տեխնիկական ուսուցում, այդ թվում՝ լիցենզավորման քննություններին նախապատրաստում, աշխատավայրում պահանջվող հմտություններ, մենթորի (վարպետ-դաստիարակի կամ արտադրական ուսուցման վարպետի տրամադրում), աշխատավայրում փորձի ձեռքբերում և մասնագիտական կապերի ստեղծում:

«Կամրջող» ուսուցման ծրագրերի մասին իմացեք ավելին՝ այցելելով http://www.ontarioimmigration.ca/en/working/OI_BRIDGE.html

«Գլոբալ իքսփիրյընս Օնթարիո» / (Global Experience Ontario)

«Գլոբալ իքսփիրյընս Օնթարիո» (GEO) կենտրոնը ներգաղթյալներին օգնում է ճանաչել տալ իրենց արտասահմանյան դիպլոմները/վկայականները և լիցենզավորվել՝ աշխատելու առողջապահության ոլորտին չառնչվող՝ օրենսդրությամբ և կանոնակարգերով կարգավորվող մասնագիտություններով կամ պարտադիր սերտիֆիկացման ենթակա մասնագիտություններով:

Այս կենտրոնը տրամադրում է տեղեկություններ և ուղեգրումներ հետևյալ հարցերով.

- առողջապահության ոլորտին չառնչվող՝ օրենսդրությամբ և կանոնակարգերով կարգավորվող մասնագիտությունների կամ պարտադիր սերտիֆիկացման ենթակա մասնագիտությունների լիցենզավորում
- Դիպլոմների/վկայականների գնահատում
- Զբաղվածության և ուսուցման ծրագրեր, որոնք ներգաղթյալներին կարող են օգնել լիցենզավորվել՝ աշխատելու իրենց բնագավառում
- Առնչվող մասնագիտական կարիերաներ
- Մասնագիտական ցանցեր, փորձնակության (պրակտիկայի) և մենթորության հնարավորություններ:

«Գլոբալ փորձառություն, Օնթարիո» (Global Experience Ontario) ծրագրի մասին իմացեք ավելին՝ այցելելով http://www.ontarioimmigration.ca/en/geo/index.htm

Առողջապահության և երկարաժամկետ խնամքի նախարարությունն առաջարկում է նույնպիսի ծառայություններ միջազգային կրթություն ստացած մասնագետներին «Հելթֆորս Օնթարիո« (HealthForce Ontario) կենտրոնի միջոցով: Իմացեք ավելին՝ այցելելով http://www.healthforceontario.ca/en/M4/Internationally_Educated_Health_Professionals/Licensing

Թարգմանչի ծառայություններ

«Թարգմանչի ծառայություններ» ծրագիրը օգնում է ընտանեկան կամ սեռական բռնություններից տուժածներին լեզվական խոչընդոտները հաղթահարելու համայնքային աջակցության ձևերով, ինչպիսիք են սոցիալական, առողջապահական և իրավական ծառայությունները:

Եթե դուք ընտանեկան կամ սեռական բռնություններից տուժած եք, ապա կարող եք անվճար օգտվել այդ ծառայություններից, որոնք տրամադրվում են Օնթարիոյի ամբողջ տարածքում՝ օրական 24 ժամ:

«Թարգմանչի ծառայություններ» ծրագրի մասին իմացեք ավելին՝ այցելելով http://www.citizenship.gov.on.ca/english/grantsandfunding/language.shtml